

ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ

պարմական գիտ. դոկտոր,

ՆԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1918 Թ. ԱՇՆԱՆԸ

Թուրքական կառավարությունը, չկարողանալով միանշանակորեն մերժել սովահարության մարտված անօթեւան բազմահազար հայ փախստականների վերադարձը հայրենի բնակավայրեր թույլատրելու վերաբերյալ գերմանական կառավարության և բանակի գլխավոր հրամանատարության կոչերն ու պահանջները, ի վերջո կարծես հարկադրված եղավ գնալ որոշ զիջումների: Էնվերը Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բեռնհարդթին և այնպեղ գրովող հայ պարվիրակներին իր պարբասականությունն էր հայտնել Լոռին և Փամբակը «որոշակի պայմաններով» հայերին փրամադրելու վերաբերյալ, և բացի այդ, ինչպես վկայում էր նաև նրա՝ օգոստոսի 3-ին գերմանական բանակի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ Պաուլ ֆոն Շինդերբորգին ուղարկված նամակը, համաձայնել էր հայերի վերադարձը թույլատրել, բայց միայն մասնակիորեն, այսինքն՝ դեպի Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծից առնվազն 20 կմ հեռավորության վրա ընկած փարածքը և այն շրջանները, որպեղ մուսուլմանների և հայերի միջև մարտեր փեղի չէին ունեցել (ընդ որում՝ նա այդ փարածքներից շեշտում էր մասնավորապես Բաթումի շրջանը), իսկ փախստականության անվերապահ, զանգվածային վերադարձը նա շարունակում էր մերժել ի համարել՝ «հիմնավորելով» այն պարճառաբանությամբ, թե քանի որ նրանց բնակավայրերից շարերը գրովում էին թուրքական բանակի թիկունքում, վերջինիս համար կարեղծվեր վրանգավոր իրադրություն, և մյուս կողմից բանակը, որը պեպք է ձեռնամուխ լինել Բաքվի գրավմանը, թիկունքի հեղ իր հեղադարձ կապից կմեկուսացվեր¹:

Թուրքական կառավարությունն, այնուհանդերձ, իր այս հանձնառություններով նույնպես սոսկ ժամանակ շահելու նպարակ էր հեղապնդում և մարադիր չէր գրանբ իրագործել: Դա ակնհայտ դարձավ, երբ գեներալ ֆոն Ջեկպը, փեղեկանալով Լոռին և Փամբակը հայերին հանձնելու՝ Էնվերի համաձայնության մասին՝ իր կողմից եւս հեռագրով համապարասխան կարգադրություն կարաբեց՝ այն ուղարկելով Բաթում և այդ մասին փեղեկագրելով Թիֆլիսում Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Կրես ֆոն Կրեսենշտայնին: Նրա հեռագ-

1 „Deutschland und Armenien 1914-1918“, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, էջ 418-420: Այսուհետև այդ ժողովածուի փաստաթղթերից կարարված հղումները համամարել դրանց վերանայված փեքսերի հեղ, քանի որ ժողովածուի առանձին փաստաթղթերում կրճատումներ ի հայտ գալու դեպքում նկարի են առնվել և օգրագործվել են նաև դրանց վերանայված փեքսերը: Տնս ինքերենպային ցանցում՝ Wolfgang Gust, Revidierte Lepsius-Edition, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset>: Էնվերի վերոնշյալ համակում ամրագրված այդ փեքսներն, ի դեպ, հանդիսանում էր այն հիմնական պարբակը, որով թուրքական կողմը փորձում էր իր գերմանացի դաշնակցին համոզել փախստականների զանգվածային վերադարձի ռազմավարական աննպարակահարմարությունը:

րի՝ Բաթում հասնելուց քառացիորեն երկու ժամ անց, սակայն, ինչպես վկայում էր ֆոն Կրեսը, մի նոր հեռագիր է ստացվում Էնվերից, որով ֆոն Զեկերի կարգադրությունը համարվում էր անվավեր²:

Որոշ բնակավայրերում հայերի վերադարձը թույլատրելու՝ Էնվերի խոսքումը նույնպես իրականում սոսկ աջակցություն էր, եւ թուրքական կառավարությունը ձգտում էր զանազան պարզվակներով ու անվերջ ձգձգումներով դա եւս ձախողել: Գեներալ ֆոն Կրեսն այդ իրադրությունում շարունակում էր ջանքեր գործադրել՝ մի կողմից թուրքական կառավարությանը պահանջներ անելով, եւ փոքրիկ երաշխիքը կյանքի կոչելու եւ մյուս կողմից հայ փախստականների գանգվածային վերադարձի արգելման առնչությամբ Էնվերի ներկայացրած «հիմնավորման» անհեթեթությունը գերմանական կողմին պարզ դարձնելու համար: Ընդ որում, ուշագրավ է, որ գեներալն այդ նպատակով փորձում էր օգտագործել նաեւ թուրքական բանակային հրամանատարության մեջ առկա հակասությունները:

Օգոստոսի 30-ին թուրքական 3-րդ բանակի գլխավոր հրամանատար Նալի փաշան իր պաշտոնավարումն սկսելու առիթով այցելեց Երևան, եւ գեներալ ֆոն Կրեսը, ընդառաջելով Նայասպանի Հանրապետության կառավարության ներկայացրած խնդրանքներին եւ ստանալով նաեւ համապատասխան հրավեր Նալիից՝ վճռեց բարոն Ֆրանկենշտայնի հետ միասին ուղեկցել նրան Երևանում: Ինչպես հաղորդվում էր գեներալի՝ սեպտեմբերի 3-ին կանցյր իշխան ֆոն Ներպրինգին ուղարկված տեղեկագրում, նա փաշայի հրավերը ընդունել էր այն նկատառումով, որ, օգտագործելով հանդիպման առիթը, կարող էր նրան համոզել դարձնել փախստականների վերադարձի հետ կապված թուրքական պաշտոնական առարկությունների սնանկությունը եւ միաժամանակ նրան դրդել, որ նա անձամբ նույնպես իր ազդեցությունը գործադրեր թուրքական բանակի գլխավոր հրամանատարության վրա՝ այդ դիրքորոշումը փոփոխելու համար: Բացի այդ, ֆոն Կրեսը հույս էր փայփայում Նալիի դիրքորոշումը նրա իսկ տեղեկագրերի միջոցով ներկայացնել նաեւ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությանը, որը հակված էր ընդունելու հայ փախստականների վերադարձի արգելման թուրքական պարզառաքանությունները: «Ես հույս ունեմ,- մասնավորապես նշում էր գեներալը,- որ, այդ առիթն օգտագործելով, Նալի փաշային կկարողանամ համոզել, որ, այսպես կոչված, հայկական վրանգի առնչությամբ Կոստանդնուպոլսում կատարվող առարկությունները սխալ եւ անհիմն են: Ես հույս ունեմ, որ Նալի փաշայի տեղեկագրերին կհաջողվի թուրքական բանակի գլխավոր հրամանատարությանը ապացուցել, որ բոլոր կարգախոսները, ինչպես օրինակ՝ «ռազմական անհրաժեշտություն», «հեղադարձ կապերի վրանգում» եւ այլն, որոնցով բազմաձևապես մարդկանց սպանող արդարացնում են եւ Գերմանիայի դեսպանի ու գերմանական բանակի գլխավոր հրամանատարության ջանքերը փորձում են խափանել, գուրկ են ցանկացած հիմնավորվածությունից: Ես մասնավորապես ակնկալում եմ հաջողություն ունենալ այն բանում, որ այսուհետ նաեւ այդ թուրք գորավարի տեղեկագրի միջոցով, որի կողմից կատարված անհաշիվ հայերի սպանությունները կարող են բացառել հայերի նկատմամբ նրա բարեկամության ցանկացած կասկած, գեներալ ֆոն Զեկերին տեսանելի կդարձվի, թե ինչ անամոթ կերպով է նա հայերի հետ կապված բոլոր հարցերում Թուրքիայի կողմից խաբվում»³:

² Տե՛ս անդ., էջ 433:

³ Անդ., էջ 432:

Նաջողության հասնելու՝ Ֆոն Կրեսի լավարեսությունը պայմանավորված էր մի կողմից Նալիլի և իր թուրք պաշտոնակիցների միջև առկա հակասությունների գիտակցումով, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ Նալիլ փաշան, նրա համոզմամբ, շար ավելի խելամիտ քաղաքական գործիչ էր, քան Վեհիբ, Էսադ փաշաներն ու թուրք մյուս բարձրաստիճան հրամանապարհները: Այնուհանդերձ, գեներալը միաժամանակ հարկ էր համարում ընդգծել, որ Կովկասում թուրքական զորամասերը՝ սկսած բանակի առաջորդներից մինչև սահմանային պահակակետում կանգնած վերջին լեյտենանտը, «եթե» Վեհիբ փաշայի կողմից այն աստիճան գրգռված էին հայերի և գերմանացիների դեմ, որ երկար ժամանակ կպահանջվեր, մինչև Նալիլ փաշային կհաջողվեր դրական փոփոխություններ հասնել: Էսադ և Ալի Իսխան փաշաները և հարկապես Շեքի փաշան, Ֆոն Կրեսի վկայակոչմամբ, Նալիլի գործունեությունը շարունակ խոչընդոտում էին, ընդ որում օր չէր լինում, երբ Շեքի փաշան ցանկացած կարգապահություն ուրանալու անպարկաշույն հանդես չգար Նալիլի դեմ: Վերջին օրերին նա նաև Նալիլին գրել էր, որ ամենևին չէր կարող համաձայնել նրա քաղաքականության հետ, և որ այն բանից հետո, ինչ Նալիլը ստանձնել էր գլխավոր հրամանապարհությունը, գերմանացիների ազդեցությունը նրա վրա դարձյալ զգալի էր: Ֆոն Կրեսի վկայակոչմամբ Նալիլի հրամանները պարզապես չէին կատարվում, նրա յուրաքանչյուր հրաման պարասխանվում էր առարկություններով: Նրա ամեն մի որոշում ենթարկվում էր քննադատության: Նրա կողմից կարգադրված օպերացիան (Պարսկաստանում) անգամ ամենակրպսեթ սպաները անմիջապես և անիրագործելի էին համարում, և այդպիսով նրա ղեկավարման հանդեպ վստահությունը սխալմամբի կերպով սասանվում էր: Այդ ամենով հանդերձ՝ Նալիլը զգուշանում էր բանակի նախկին գլխավոր հրամանապարհի դեմ բավականաչափ վճռականորեն հանդես գալ: Ֆոն Կրեսի հետ գրույցների ընթացքում նա գանգաբանվել էր այն մեծ դժվարություններից, որ նրա համար հարուցում էին 6-րդ և 9-րդ բանակների՝ իրեն ստորադասված գլխավոր հրամանապարհները և իր «հարևան» Էսադը: Ինչ վերաբերում էր վերջինիս, ապա գեներալին փոփոխական էր, որ Էսադը լիովին գրավում էր շարքի պետ Օմեր Լուֆթիի ազդեցության ներքո, որ Վեհիբի կատարածուն էր, Նալիլը միաժամանակ թախանձագին կերպով իր ցանկությունն էր հայտնել, որ Օմեր Լուֆթին շուրջով փոխաբերվեր մի գերմանացի ղեկավարով:

Վերոնշյալ հաղորդումից հետո գեներալ Ֆոն Կրեսը կանցյրին առաջարկում էր, ելնելով բանակի գլխավոր հրամանապարհության կողմից Պարսկաստանում ձեռնարկվող ռազմական գործողությունների արդյունավետ իրագործման անհրաժեշտությունից, գեներալ Ֆոն Զեկպին հրահանգել, որ նա հոգ փաներ Շեքի փաշային որքան հնարավոր է արագ պաշտոնազրկելու մասին, որը, նրա վկայակոչմամբ, ժամանակին մեծ դժվարություններ էր հարուցել նաև գեներալ-գնդապետ, իշխան Բոթմերի համար: Իսկ այնուհետև նա առանձին կերպով կանցյրի ուղարկությունն էր հրավիրում թուրքական քաղաքականության համար առանձնապես բնութագրական մի շարք կարևոր իրողությունների վրա, որոնք վերաբերում էին հայ փախստականներին և բացահայտում էին նրանց բնաջնջման թուրքական նկրտումները:

Այդ առումով նա նախ անդրադառնում էր Լոռու և Փամբակի շրջանները հայերին հանձնելու վերաբերյալ Թուրքիայի երկդիմի խաղին, ինչպես և այն փաստին, որ երբ հար-

ցը ֆոն Զեկերի կարգադրությամբ հանգուցալուծման շեմին էր գտնվում, Էնվերը այդ կարգադրությունն անվավեր հայտարարեց: Թուրքական աչքակապուկի մեկ այլ ցցուն դրսևորումը, ինչպես նշում էր ֆոն Կրեսը, ի հայտ էր գալիս հայ փախստականներին որոշակի պայմաններով վերադարձի հնարավորություն ընձեռելու՝ թուրքական կառավարության համաձայնության պարագայում: Նրանց, ինչպես հավաստվում էր թուրք ռազմական նախարարի՝ օգոստոսի 3-ի վերոնշյալ հեռագրում, թույլատրվում էր վերադառնալ, իսկ Էսադ փաշան պետք է ընդուներ դրա իրականացման համար անհրաժեշտ որոշումները: Սակայն երբ պարզ դարձավ, որ սայրը փողից չէր շարժվում, իսկ այդ առնչությամբ Էսադ փաշային ֆոն Կրեսի ուղարկած հեռագրերն ու նամակներն առհասարակ որևէ պատասխան չէին ստանում⁴, ֆոն Կրեսն ու բարոն Ֆրանկենշտայնը Բաթում ուղարկեցին գերմանական բանակի ավագ լեյտենանտ Պավլասին, որպեսզի նա Էսադ փաշայի հետ բանակցեր փախստականների վերադարձի կանոնակարգային հարցերի մասին: Վերջինս, սակայն, Պավլասին ետ է ուղարկում՝ պնդելով, թե այդ հարցում ղեկավար իրավասությունների պայմանները փոխվել էին, և որ իրավասուն արդեն Նալի փաշան էր, մինչդեռ ֆոն Կրեսն, այնուհետև հանդիպելով Նալիին փողեկանում է, որ Էսադի պնդումը հնարածին է եղել. հանգամանք, որը, նրա վկայակցմամբ, փաստում էին նաև Նալիի կողմից իրեն ներկայացված փաստաթղթերը:

Թե միաժամանակ հակահայկական փրամադրություններ բորբոքելու համար որպիսի կեղծ փողեկարվություն էր շրջանառվում թուրքական պաշտոնական շրջաններում, վկայում էր, օրինակ, Նուրի փաշայից Նալիին և նաև Կոստանդնուպոլիս ուղարկված մի փողեկագիր, որի բովանդակությունը Նալիը ներկայացրել էր ֆոն Կրեսին: Այնպեղ նշված էր, որ հայերը Ղարաբաղի շրջանում 2 օրում 30 թաթարական գյուղ էին այրել: Չունենալով հավաստի փաստեր կեղծիքը հիմնովին հերքելու համար՝ ֆոն Կրեսն այնուհանդերձ կանգների ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ Նուրին շար լավ գիտեր, որ այդ հարցում խոսքը պետք է վերաբերեր Անդրանիկին, որի հետ Նայաստանի Նանրապետության կառավարությունը ոչ մի առնչություն չուներ, լավ գիտեր նաև, որ հայկական կառավարությունն առաջարկել էր ձերբակալել Անդրանիկին և «վնասագրեմել», սակայն Ադրբեջանը հրաժարվում էր հայերին թույլատրել մուտք գործել Ղարաբաղի վիճելի տարածք: «Նուրին, բացի այդ, շար լավ գիտի,- գրում էր այնուհետև ֆոն Կրեսը,- որ եթե մի թաթար նրան փողեկացնում է, թե 30 գյուղեր ոչնչացվել են, ապա ավերվել է առավելագույնը 10 գյուղ: Նա նաև շար լավ գիտի, որ եթե ինքը փողեկացնում է թաթարական մի գյուղի մասին, ապա Կոստանդնուպոլսում 4 կամ 5 խոճուկ կավել խրճիթներ չեն պարկերացնում: Սա միայն մեկ օրինակ է այն շարերից, թե ինչպիսի միջամտավորությամբ են հաղորդագրություններ ուղարկվում Կոստանդնուպոլիս՝ այնպեղ, այսպես կոչված, հայկական վրանգի մասին լիովին չափազանցված և թյուր պարկերացումներ սրբեղծելու համար»⁵:

4 Ինչպես մարմանում էր ֆոն Կրեսը, Էսադը սկզբունքորեն չէր պատասխանում իր համար ոչ ընդունելի նամակներին ու հեռագրերին:

5 Անդ, էջ 433: Ղարաբաղին վերաբերող թուրքական վերոնշյալ հակահայկական քարոզչությունը հերքելու համար ֆոն Կրեսը հարկ համարեց սեպտեմբերի 23-ին ես մի հեռագիր ուղարկել արագորժնախարարությանը, որպեղ նա գրում էր. «Ինչպես ինձ Նալի փաշան փողեկացնում է, Նուրին գեներալ Անդրանիկի բանդայի զինաթափման համար կանոնավոր հայկական զորամասերի մուտքը Ղարաբաղի տարածք մերժել է այն պարճառաբանությամբ, թե Ղարաբաղը ադրբեջանական տարածք է: Ըստ այդմ հայկական կառավարության՝ իբրեւ թե ոչ լույս կեցվածքի և Թուրքիայի թշնամիների հետ նրա գաղտնի համագործակցության վերաբերյալ

Փոն Կրեսը միայն վերոնշյալ՝ «գիտակցաբար հաղորդվող սխալ տեղեկատվությամբ» էր բացատրելի համարում այն հանգամանքը, որ գեներալ Ֆոն Զեկերը, չնայած իր տեղեկագրերին, դեռ շարունակ տեղի էր տալիս թուրքական տեսակետին, ըստ որի՝ հայ փախստականների վերադարձը հայրենիք վերանգ էր պարտականում թուրքական բանակի համար: Նդերով այդ մասին Էնվերի ձեռնարկում, այն է՝ «չի կարելի թույլ տալ, որ կես միլիոն զինված թշնամիներ բնակեցվեն մեր բանակի թիկունքում», Փոն Կրեսը մեկ անգամ եւս ընդգծում էր, որ այդ «կես միլիոն զինված թշնամիները» զառամյալ տղամարդիկ, կանայք ու երեխաներ էին: Իսկ այն բանի համար, որ այլևս գրեթե ոչ մի՝ գեներալի ունակ տղամարդ չկարողանար վերադառնալ, ըստ գեներալի, թուրքերն ու թաթարներն արդեն հիմնովին հոգ էին տարել: Բացի այդ, նշում էր նա, շատ հեշտ խնդիր էր փախստականներին սահմանն անցնելու ժամանակ գինաթափելը⁶:

Նարեկանշական է, որ Փոն Կրեսը փորձում էր հայերի վերադարձի անհրաժեշտությունը հիմնավորել մինչև իսկ «հայկական վրանգի» վերաբերյալ թուրքական պնդումների տեսանկյունից: Ինչպես նշում էր նա, ընդարձակ տարածքի վրա սփռված թշվառ փախստականները շատ ավելի աննշան վրանգ իրենցից կներկայացնեին, քան եթե նրանք, մի նեղ տարածքում հավաքված, սովից դիմելին հուսահատ գործողություններին: «Եթե հայերը ցանկանային, կարող էին հիմա էլ շարունակ անանցանելի լեռնային վայրերում առանց որևէ դժվարության շաբաթներով կտրել Սանահին-Ղարաքիլիսա լեռնային երկաթուղու կառույցներից մեկի հետ թուրքերի հետադարձ կապերը,- նշում էր գեներալը:- Եթե թուրքերը կամենում են իրենց ապահովագրել հետադարձ կապերի խզման որևէ սպառնալիքի դեմ, ապա դա կարող են անել միայն հայերին իրենց բարեկամներ դարձնելու միջոցով: Եթե, սակայն, նրանք հայերին մղեն հուսահատության, ապա կունենան իրենց մտադրությունների ճիշտ հակառակ արդյունքը»⁷:

Փոն Կրեսը հարկ էր համարում դարձյալ ընդգծել, որ թուրքերի կողմից գրավված հայկական տարածքներում բերքի մի փոքր մասը թուրքերն իրենք են հավաքել, իսկ մնացած՝ անհամեմատ մեծ մասը, ոչնչացրել են իրենց ձիերն ու անասունները բշկով արտերի վրայով: Եթե փախստականներին չթույլատրվեր վերադառնալ, ապա, ըստ նրա, այդ բերքի տարածքները՝ «առաջին հերթին ի վնաս թուրքերի», հաջորդ տարի նույնպես բերք չէին տա: Նա միաժամանակ մտադրում էր, որ թուրքերը միանգամայն անտարբեր էին բանակի գլխավոր հրամանատարության կողմից կարգադրված առաջխաղացումը դեպի Պարսկաստան իրագործելու հարցում՝ որպես ապացույց ներկայացնելով թուրքերի գրաված տարածքներում երկաթուղու՝ ամիսներ ի վեր առկա անմխիթար դրությունը: Դեռ ոչինչ չէր արվել ավեր-

թուրքական բողոքները այսուհետև կարող են միանգամայն անհիմն համարվել»: Անդ, էջ 435:

6 Ի հավելումն վերոնշյալի՝ գեներալ Ֆոն Կրեսը սեպտեմբերի 11-ին արագորժնախարարություն ուղարկեց նաև մի ընդարձակ տեղեկագիր զարնանը եւ ամռանը Նախիջևանում թուրքերի ու թաթարների կողմից հայերի դեմ իրագործված զանգվածային բռնությունների մասին, որտեղ ամփոփված էին Նոխիսիմե Գալումովայի, Աննա Ադամովայի, Աննա Վասենկոյի եւ այլ հայտիներին վկայությունները իրենց, իրենց մերձավորների եւ առհասարակ Նախիջևանի հայերի հանդեպ իրագործված սահմոկեցուցիչ վայրագությունների վերաբերյալ: Տեղեկագիրն ավարտվում էր սարսափները վերապրած ականատեսների ստորագրություններով: „Die Armenische Frage und der Genozid an den Armeniern“, Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardges Mikaeljan, Jerewan 2004, էջ 580-583:

7 „Deutschland und Armenien...“, էջ 434:

ված ջրհորները վերականգնելու համար: Շոգեքարշերը սնուցվում էին մասամբ ձեռքով գործող փոքրիկ պոմպերով, մասամբ սովորական դույլերով: Երկաթուղային հեռախոսագիծը դեռ չէր վերականգնվել: Չկային ուղեւորներ, և ամեն օր հնարավոր էր, որ գնացքները դուրս գային գծերից: Երկաթուղային երթևեկությունը հղի էր մեծ վրանգներով:

Ինչ վերաբերում էր Թիֆլիսում և Երևանում նոր նշանակված թուրք դիվանագիտական ներկայացուցիչներ Աբդուլ-Քերիմ և Սեհմեդ Ալի փաշաներին, որոնք դեռ գտնվում էին Բաթումում, ապա ֆոն Կրենսը նշում էր, որ նրանք երկուսն էլ իրեն ծանոթ, հեղադեմ ու մոլեռանդ մահմեդականներ էին, որոնցից կարելի էր առաջին հերթին լավ ծառայություններ սպասել պանիսլամական պրոպագանդայի զարգացման հարցում: Ուստի ինքնին հասկանալի է, որ նրանք հայ փախստականների վերադարձի հարցին նպաստելու և համապետել կերպով քարածաշրջանային այլ խնդիրներ լուծելու հարցում պիտանի լինել չէին կարող:

Ֆոն Կրենսի երևանյան այցը և հանդիպումները Նալի փաշայի ու հայկական կառավարության հետ, ինչպես և նրա աջակցությամբ Նալիի և հայկական կառավարության միջև տեղի ունեցած բանակցությունները, ինչպես նա իր սեպտեմբերի 3-ի տեղեկագրին կից մի հավելվածով իրագրելում էր կանցլերին, ունեցել էին հետևյալ արդյունքները. հակառակ Նախաստորանի կողմից Թուրքիային «սպառնացող վրանգի» վերաբերյալ Էսադ, Շեքի և Նուրի փաշաների՝ միտումնավոր կերպով աղավաղված տեղեկությունների, Նալի փաշան այն համոզումն էր արտահայտել, որ Նախաստորանի ամենեւին մտադրություն չունենա հանդես գալու Թուրքիայի դեմ, և խոստացել էր Էնվերին պարզաբանել, որ փախստականների վերադարձի դեպքում հարցը հիմնականում վերաբերում էր կանանց, երեխաների ու ծերունիների, իսկ դեռ կենդանի մնացած՝ զենքի ունակ փոքրաթիվ տղամարդիկ զենք կրելու դեպքում կարող էին նախապես հեշտությամբ զինաթափվել: Նալին ինքը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուց 20 կմ դեպի արևելք հայերի վերադարձը թույլատրելու վերաբերյալ Էնվերի առաջարկը բնութագրել էր որպես «անարժեք» և միաժամանակ ֆոն Կրենսին խոստացել էր մեծագույն եռանդով միջնորդել Լոռու և Փամբակի շրջանները հայերին հանձնելու համար: Ինչ վերաբերում էր Էսադ փաշային, ապա, ինչպես ընդգծում էր ֆոն Կրենսը, նրա նենգամտությունը լավագույնս ապացուցվում էր Պավլասին տրված այն թուր պարզաբանմամբ, թե այն տարածքների որոշարկումը, որտեղ փախստականները առանց կոտորածների վրանգի ենթարկվելու կարող էին վերադառնալ, գտնվում էին ոչ թե իր, այլ Նալի փաշայի իրավասության ներքո, ինչը, սակայն, վերջինս հերքել էր⁸:

Ֆոն Կրենսի այս տեղեկագիրն ու գերմանա-թուրքական երկխոսության մյուս վավերագրերն, անշուշտ, մեծ հեղափոխություն են ներկայացնում ոչ միայն հայկական խնդրի վերաբերյալ երկու դաշնակիցների դիրքորոշումները, այլև թուրքական բարձրագույն հրամանատարության ներսում առկա փոխհարաբերությունները պարզաբանելու առումով: Այն հարցին, թե արդյոք Նալիը որքան անկեղծ էր զենքավաճ ֆոն Կրենսին ներկայացրած իր նկատմումներում, անշուշտ, անհնար է միանշանակորեն պատասխանել: Նրա նշանակումից և զենքավաճ ֆոն Կրենսի հետ նրա հանդիպումներից հետո, սակայն, կարծես թե սալլը սկսեց տեղաշարժվել:

Ինչպես Նախաստորանի ճանապարհային կառավարությունը տեղեկացրել էր ֆոն Կրեն-

8 Տե՛ս անդ, էջ 433:

սին, թուրքերը Ալեքսանդրապոլի և Կարսի շրջաններից 14. 000՝ հիմնականում գյուղաբնակ հայերի աքաղիչ էին Էրզրում և Նասան Կալա՝ այնպիսի նրանց որպես աշխատուժ օգտագործելու համար: Նրանք, սակայն, ըստ նույն տեղեկության, շահագործվում էին անմարդկային կերպով և դատապարտված էին սովամահության⁹: Բռնի Թուրքիայի խորքը տարված այդ մարդկանց թույլատրվեց վերադառնալ, և սեպտեմբերի առաջին տասնօրյակի ընթացքում տղամարդկանց 400 խմբեր, որոնց շարքում կային նաև սպաներ, վերադարձան Երևան: Լեյբենհանսը Այգենմանը¹⁰, հաղորդելով, որ թուրքական կառավարությունը նրանց

9 „Die Armenische Frage...“, էջ 579:

10 Թիֆլիսում տեղակայված գերմանական ավիացիոն բաժանմունքի լեյտենանտ Այգենմանը օգոստոսին ուղարկվել էր Երևան քաղաքական և ռազմական բնույթի դիտարկումներ կատարելու համար: Քանաքեռից Երևան ճանապարհը նա անցել էր հայկական հեծելազորի ուղեկցությամբ: Երևանում նրան արդեն սպասում էր այդ այցով խանդավառված մարդկանց մի մեծ բազմություն, իսկ Երևանի հոգևոր առաջնորդի տանը կայացած ճաշկերույթին ներկա էին եղել ոչ միայն հայ քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձինք, այլև Նանրապետության ազգային փոքրամասնությունների, նաև Նանրապետությունում գործող բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները: Եւ, այնուհանդերձ, նման ոգևորությունը անհիմն էր, իսկ լեյտենանտի «դիտարկումներն» ու այնուհետև պատրաստված զեկուցագիրը հիմնականում հատկանշվում էին մակերեսայնությամբ, անտեղյակությամբ, թերեւս, նաև նրա անհավասար քաղաքական «ընկալումներով» պայմանավորված նախադրամադրվածությամբ: Մինչև իսկ Այգենմանին ցուցաբերված ջերմ վերաբերմունքը նա ընկալել էր որոշակի քաղաքական ենթատեքստով: «Այն պահին, երբ մենք մտանք Երևան, - գրում էր նա, - մարդիկ կարծում էին, թե թուրքերը հիմա մեր հրամանով իսկույն Բրեստ-Լիտվսկի գծից այն կողմ կբաշվեն, և Նայասպանը կկարողանա իր հին սահմանները ձեռք բերել: Դա ոչ միայն պարզունակ կերպով մտածող ժողովրդի կարծիքն էր, այլև նույնիսկ մեծ թվով կրթված հայերի: Քանի որ այդ հույսը, երկու ամիս չանցած, չի իրականացել, ... քրաժառողությունը փոխվել է, և նրանք դարձյալ ավելի Անգլիայի հետ են սիրախաղ առնում»: Տեղեկագիրը, որն, ի դեպ, բնութագրվում էր ինչպես թաթարների, այնպես էլ հայերի ընդհանուր կրթամակարդակի, հանրապետությունում զինվորական գործի դրվածքի վերաբերյալ բացասական գնահատումներով, հուշում է, որ հեղինակի նախադրամադրվածությունը որոշակիորեն պայմանավորված էր Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Անգլիայի հանդեպ հայերի դրական վերաբերմունքով: Ըստ այդմ՝ նա պարենասպաշտ էր համարում հայ քաղաքական գործիչներին, որոնք, ըստ նրա, կարող էին այսօր Գերմանիայի, իսկ վաղը, եթե իրադրությունը փոխվեր, Ռուսաստանի կամ Անգլիայի կողքին լինել: Նա չէր զրկում հայերին մինչև իսկ «ծուլ», «պարզունակ և անշնորհք ասիացիներ» անվանել և ի հաստատումն դրա կատարել նաև հղում, իբր թե, մի հայի կողմից (վերջինս անունը նա նշում է Շ. Ա. հասպալովում) օգոստոսի 19-ին իրեն ասված խոսքերից. «Հայկական կառավարությունը բաղկացած է բանդիտներից ու խռովարարներից, ժողովուրդը բիրտ է, վայրենի և չունի մշակույթ, իսկ զինվորները ավազակներ են»: Այգենմանի պարզունակ և «զգայուն» քաղաքական ընկալումը ավելի ակնբայն է դառնում հետևյալ դիպվածով. տեղեկանալով ամերիկացիների՝ Երևանում տեղեկած՝ «Քրիստոնյա երկրաստորների միություն» անունը կրող և նաև որբախնամ գործունեությամբ զբաղվող մի ընկերության մասին, որտեղ, նրա համոզմամբ, ամերիկյան քաղաքական պրոպագանդա էր տարվում, նա հարկ է համարում Երևանում անցկացրած շաբաթների ընթացքում մեկ այլ որբանոցի առանձնահատուկ օժանդակություն ցուցաբերել և այնպիսի ըստ հնարավորին «հակապրոպագանդա» վարել: Ինչպես փաստում է Այգենմանի տեղեկագիրը, նա շփումներ է ունեցել նաև թաթարների հետ, որոնք, ըստ նրա հավաստման, անպարճառ թուրքամետ դիրքորոշում չունեին ու հասկանում էին, որ թուրքական տիրապետությունն իրենց կյանքում առաջինը չէր բերելու, և որ թուրքերի առաջխաղացումն ու տարածքային գրավումները միայն այդ տարածքների կողոպտման նպատակն էին հետապնդում: Այս ամենով հանդերձ՝ Այգենմանը միաժամանակ արձանագրում էր, որ հայերն ունեն բոլոր հարեան ժողովուրդներից գերազանցող մտավորականություն և շատ ընկալունակ են մտավոր ու նյութական արժեքների նկատմամբ, իսկ վաճառականները «խիստ օժտված են և մեծ գործունեություն են վարում»: Ինչ վերաբերում էր Նայասպանի տնտեսության զարգացման հեռանկարներին, ապա նա նշում էր, որ երազական արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունների ներդրումների, նրանց միջոցով իրականացվող տնտեսավարման դեպքում կարող էր ի հայտ գալ «մեծածավալ արտադրություն», և ավելի «հսկայական» հանքային հարստություններն էլ մեծ նկատարներ կարող էին բերել:

Եթե Այգենմանի մեկնաբանություններն ու գնահատումները հիմնականում չափազանց մակերեսային, պարզունակ և խոցելի են, ապա նրա՝ անկանախի վկայությունները պարունակում են արժեքավոր տարրեր: Ուշագրավ է, օրինակ, նրա տեղեկությունն այն մասին, որ սկզբնապես Երևանում բնակվող 20. 000 թաթարներից մոտ 15. 000-ը մինչև օգոստոս արտագաղթել էին, բայց քանի որ «թուրքերի մոտ» նրանց կենսապայմանները չէին

թույլատրել էր վերադառնալ իրենց գյուղերը, որոնք հիմնովին ավերված էին, միաժամանակ ընդգծում էր, որ այդ մարդիկ գրավում էին «սոսկալի» վիճակում¹¹: Իսկ թե ինչպիսին էր այդ սոսկալի վիճակը, ավելի որոշակի է դառնում հեղինակի հետևյալ տեղեկությամբ. «Ես ինքս գնացի կայարան, և այնտեղ տեսա առաջին 200-ին, որոնք գալիս էին Էրզրումից: Մարդիկ ցնցոտիների մեջ պատված էին, մասամբ մերկ ուրբերով, կեղտի պատճառով աչքերը չռած և ամբողջովին թերասնված էին: Երկուսը սովից մահացան Իլուխանգյումում, ուրիշ երկուսը Իլուխանգյումից Երևան ընկած կարճ ճանապարհահատվածում, իսկ երեքը Երևանի կայարանում հոգեվարքի մեջ էին և փաստորեն նույն օրն էլ մահացել են: Նրանց մի զգալի մասը այնպես թույլ էին, որ գնացքի վագոնից մեծ դժվարությամբ դուրս եկան և անմիջապես ստիպված էին դարձյալ գեղերին մեկնվել: Նրանք պնդում էին, որ Էրզրումից մեկնելու ժամանակ իրենց նույնիսկ մի կտոր հաց չէին փակել: Երեկ տեղ հասած երկրորդ խումբը պետք է նույն պարկերն ունեցած լինի: Այդ խմբից ես մի քանի մարդ մահացել են: Թեև արդյոք այդ խմբին նույնպես օրեր տևող երկաթուղային ճամփորդության համար ոչ մի սննդամթերք չէին փակել՝ ևս դեռ չեմ հասցրել տեղեկանալ»¹²:

Ինչևհետև, Թուրքիայի հեղափոխական մակարդակով տեղի ունեցող բանակցություններում պաշտոնական Գերմանիան սկզբունքորեն շարունակում էր հանդես գալ Բերսարի պայմանագրով նախատեսված սահմանները ճանաչելու պահանջով, ինչը թուրքական կառավարության բացահայտ և անուղղակի ընդդիմության, նաև «դիվանագիտական խուսանա-

բարելավվել, նրանք ձգտում էին երբ վերադառնալ, մինչդեռ սահմանի վրա թուրք զինվորականության հարուցած արգելքների պատճառով չէին կարողանում դա անել: Ըստ նրա հավաստման՝ Երևանում գրավող թուրք ավագ լեյտենանտ Նուրի բեյն իր հերթին նույնպես ձգտում էր այնտեղ դեռ մնացած 5.000 թաթարներին, հակառակ նրանց կամքի, արտագաղթեցնել՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց թիվը հայերի համեմատ շատ քիչ էր, և բախում առաջանալու դեպքում նրանք չէին կարող հայերի դեմ հակակշիռ դառնալ: Այդ թաթարները, որոնց մեջ կային նաև շատ «ունետրներ», Այզենմանի վկայակցմամբ, չէին ուզում արտագաղթել իրենց ունեցվածքից չզրկվելու համար: Նրանց խնդրանքով Այզենմանն այդ մասին մի համապատասխան գրությամբ տեղեկացնում է Նալի փաշային: Վերջինս տեսակցում է նաև մի թաթարական պարվիթականության հետ և, ըստ թաթարների տեղեկության, նրանց արդյունքում ցանկության դեպքում մնալ Երևանում: Իր տեղեկագրին Այզենմանը կցել է նաև մի ցուցակ, որը ներկայացնում էր Կարադամչու անունով մի հայկական գյուղի թուրքերի գրավման հետևանքով փախստական դարձած բնակչության կրած կորուստները: Ցուցակի համաձայն, որը կազմվել էր առաջընդվել էր Երևանի մոտ ճամբարած բնակիչների՝ ուղղակիորեն իրեն հաղորդած փոխյուրերով, 900 բնակիչ ունեցող գյուղի 100 ընտանիքները փախստական արդյունքում կորցրել էին 26.520 դույլ գինի (1 դույլը՝ 12, 3 լիտր), 481 փոթ բամբակ (1 փոթը կազմում է 40 ֆունտ կամ 16,38 կգ), 208,5 փոթ հացահատիկի բերք, 101 ընտանի կենդանիներ, 137.200 փնային իրեր, 675.600 դրամական միավոր գումար (դրամի անվանումը նշված չէ): Տե՛ս ինտերնետային ցանց՝ Wolfgang Gust, Revidierte Lepsius-Edition, 1918-10-30-DE-002-V, <http://www.armenocide.de/armenocide/armgende.nsf/WebStart-De?OpenFrameset>, հավելված 2: Անդրադառնալով հայերի դեմ թաթարներից ստացված մի շարք բողոքներին՝ Այզենմանը սեպտեմբերի 13-ին գրում էր, թե ըստ այդ բողոքներին՝ այնտեղ, որտեղ հայերը գերակշռություն ունեին, բռնություններ էին իրականացնում մուսուլմանների դեմ, մինչդեռ եթե թաթարների կողմից իրագործված՝ հայերի կոտորածներն իրեն բավականաչափ հայտնի էին, ապա նույնը հնարավոր չէր ասել հայերի կողմից իրագործված թաթարների կոտորածների մասին: Անդ, հավելված 8: Ի դեպ, ըստ Այզենմանի մեկ այլ վկայության, Պարսկաստանում մեծ վրդովմունք էր առաջացրել այն հանգամանքը, որ Թուրքիան արեւելյան անդրկովկասյան հանրապետությունը կոչել է Ադրբեյջան, որպեսզի «կարողանա այդ կերպ պարսկական Ադրբեյջանի հանդեպ պահանջ առաջադրել: Պարսկաստանում գաղութն առանձնապես մեծ է այն պատճառով, որ պարսիկներն ամենաինքնաբերական չեն թաթարներին»: Անդ, հավելված 7:

Ֆոն Կրետսը սեպտեմբերի 9-ին գրված՝ Այզենմանի վերոնշյալ տեղեկագիրը հավելվածների հետ միասին կանցլերին ուղարկեց հոկտեմբերի 30-ին՝ այն օրը, երբ Թուրքիան ստորագրեց զինադադարը, և երբ Ֆոն Կրետսը արխիվավորման նպատակով պետք է Բեռլին ուղարկեր իր մոտ գրավող բոլոր փաստաթղթերը:

11 "Deutschland und Armenien...", էջ 435:

12 Անդ, հավելված 3:

վումներին» արդյունքում շարունակ փակուղի էր մտնում: Սեպտեմբերին, սակայն, գերմանական կողմի այս դիրքորոշումը կարծես թե սկսեց իր պարտուկները փախ:

Սեպտեմբերի 7-ին Թալեաթ փաշան Վիեննայից մեկնեց Բեռլին և նույն օրը հանդիպեց պերթարպուդար ֆոն Շինցելին՝ նրան ներկայացնելով Կովկասի ապագային վերաբերող իր ծրագիրը¹³: Ըստ այդմ՝ Վրաստանը (որից մի բանի շրջաններ պետք է անցնեին Թուրքիային), Ղազախստանը և Ադրբեջանը պետք է դառնային բուլղարիային պատկանող Ռուսաստանի դեմ: Բաբուն պետք է փրվեր Ադրբեջանից, որը պարսկապետ էր Գերմանիային փախկնալի մարտնչության ցանկացած երաշխիք: Փոխարենը Թալեաթը պարսկապետ էր ամբողջ Դոբրուջան թողնել Բուլղարիային՝ շարունակ կրկնելով, որ Թուրքիան ցանկանում էր լավ հարաբերություններ ունենալ Բուլղարիայի հետ: Այս ամենի մասին մի հետաքննող սեպտեմբերի 8-ին փոխանակեց Վ. Պոլսի գերմանական դեսպանին՝ Շինցելին միաժամանակ հայտնում էր, որ Թալեաթը մի նոր ծրագիր էր մշակել՝ կապված Թուրքմենիայի հետ, այն է՝ 14 միլիոն մուսուլմանական բնակչությամբ¹⁴ այդ երկիրը ռազմական առումով կազմակերպել և մասնակից դարձնել պարսկապետին՝ ընդդեմ Անգլիայի ու Ռուսաստանի: Թալեաթը Շինցելից պահանջել էր այդ ծրագրի իրագործման համար իրեն փրամադրել գերմանական սպաներ և ներստպաներ:

Ինչ վերաբերում էր կովկասյան սահմանների վերաբերյալ Կոստանդնուպոլսում նախարարված բանակցություններին, Թալեաթը դեմ էր արտահայտվել այն բանին, որ Բուլղարիան և Ավստրիան նույնպես մասնակցեին դրանց, բայց ընդգծել էր, որ ուզում էր ամենից առաջ համաձայնության գալ Գերմանիայի հետ: Պերթարպուդարի հիշատակված այն փաստի առնչությամբ, որ, հակառակ Գերմանիայի կողմից արտահայտված բողոքներին, Թուրքիան պայմանագրեր էր կնքել Վրաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի հետ, Թալեաթը պարսկապետին էր, թե ինքը վստահ էր, որ այդ հարցում կհաջողվեր համաձայնության գալ «կարակով» նաև ավելացնելով, թե առանց նման համաձայնության նա էր կարող վերադառնալ Կոստանդնուպոլիս¹⁵:

Նման համաձայնության կայացման շուրջ Թալեաթի և գերմանական արագործնախարարության միջև բանակցությունները փոփոխական սեպտեմբերի երկրորդ կեսին Բեռլինում: Ընդ որում, ուշագրավ է, որ գերմանական կողմը դարձյալ հանդես էր գալիս Բրեստի պայմանագրի պայմանները պահպանելու պահանջով¹⁶: Ըստ բանակցությունների ընթացքում Թալեաթ փաշայի կարարած հաղորդման՝ նա վրացիների և հայերի հետ իր

13 “Die Armenische Frage...”, էջ 578: Նախկինում սկզբում Թալեաթը ֆոն Շինցելին մեղադրել էր այն հարցում, որ Գերմանիան, իբրև թե, Կովկասի վերաբերյալ համաձայնություններ էր կնքել Ռուսաստանի հետ առանց Թուրքիային փոխանակ պահելու, ինչը, սակայն, պերթարպուդարը հերքել էր: Անդ:

14 Այս փոխյալը հաղորդել էր Թալեաթը:

15 Տե՛ս անդ, էջ 578-579:

16 Ինչպես վկայում է սեպտեմբերի 9-ին Գերմանիայի արագործնախարարության գաղտնի խորհրդական Նադոլնիի ստորագրած մի փաստաթուղթ, արագործնախարարությունը գիտակցում էր Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին հայկական կողմին հանձնելու նպատակահարմարությունը և կողմ էր դրան: «Թիֆլիս-Ջուլֆա երկաթուղին պետք է մնա Ղազախստանին, ինչպես էր այդ փաստաթուղթում: Այն դեպքի Պարսկաստանի ամենակարևոր հարվածը փանդ միակ երկաթուղին է: Նրա հանձնումը Թուրքիային ոչ միայն դեպի Պարսկաստան մեր երթուղիները կխոչընդոտի, այլև պարսիկների կողմից կհամարվի հյուսիսում Թուրքիայի միջոցով շրջափակում և ըստ այդմ հյուսիս-արևմտյան Պարսկաստանի ենթարկում Թուրքիային»: Անդ, էջ 580:

մինչև այժմյան քննարկումներում համոզվել էր, թե Թուրքիայի համար որքան կարևոր էր այդ երկու ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը: Միաժամանակ, ինչպես հաղորդում էր Ֆոն Շթումը՝ Կոստանդնուպոլսի դեսպանին ուղարկված իր սեպտեմբերի 20-ի հեռագրում, Թալեաթը վստահեցրել էր, որ բացի Կարսից, Արդահանից և Բաթումից, թուրքերի կողմից գրավված մյուս տարածքները պետք է վերադարձվեին: «Ուստի,- այդ առնչությամբ գրում էր Ֆոն Շթումը,- կարելի է հուսալ, որ թուրքական կառավարությունն այժմ պարզապես անհամաձայնություն կցուցաբերի երբ քաշվելու հարցում»¹⁷, և ըստ այդմ նա դեսպանին հանձնարարում էր ավստրոհունգարական դեսպանի հետ միասին հարցի առնչությամբ համապատասխան քայլեր ձեռնարկել թուրքական կառավարության մոտ:

Սա, անշուշտ, Նայկական խնդրի առնչությամբ գերմանա-թուրքական հարաբերություններում աննախադեպ առաջընթաց էր, քանի որ թուրքական կողմը, առաջին անգամ հրաժարվելով բոլոր պարզվածքներից ու խուսանավումներից, համաձայնում էր ճանաչել Բրեստի պայմանագրի պահանջները:

Թալեաթի և Ֆոն Շինցելի միջև կայացած բանակցությունների արդյունքում սեպտեմբերի 23-ին ստորագրվեց մի գաղտնի արձանագրություն, որի հիմնական բովանդակությունը կայանում էր հետևյալում. Թուրքիան ճանաչում էր Վրաստանը, Նախաստանը և Ադրբեջանը որպես անկախ պետություններ: Գերմանիան ճանաչում էր դեռևս միայն Վրաստանը, բայց հյուպատոսներ էր նշանակելու նաև Նախաստանում և Ադրբեջանում պաշտոնավարելու համար: Թուրքական կառավարությունը Նախաստանից և Ադրբեջանից էր էր քաշելու իր գործերը: Երբ թուրքական գործերը այդ երկու հանրապետություններին պարկանոջ տարածքներից (բացառյալ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին) դուրս գային, Գերմանիան պետք է իր ազդեցությունը գործադրեր Ռուսաստանի վրա, որպեսզի վերջինս ճանաչեր Նախաստանի և Ադրբեջանի հանրապետությունները:

Արձանագրությունում այնուհետև նշվում էր, որ Թուրքիան փորձելու էր Նյուսիսային Կովկասում և Թուրքեստանում ինքնուրույն հանրապետություններ ստեղծել, և որ Գերմանիան նրան այդ հարցում չէր աջակցելու, բայց նաև չէր խոչընդոտելու: Թուրքիան և Գերմանիան գործադրելու էին բոլոր ջանքերը, որպեսզի Քառյակ դաշինքը Կովկասի հույժից հեռավորին չափ մեծ շահույթներ ստանար: Ընդ որում Թուրքիան համաձայնում էր, որ Բաքվի նավթարդյունաբերությունը, Բաքու-Թիֆլիս երկաթուղին և նավթամուղը դրվեին Գերմանիայի վերահսկողության ներքո: Նավթը պետք է բաժանվեր Քառյակ դաշինքի երկրների, Ռուսաստանի և կովկասյան երկրների միջև: Թուրքիան պետք է Ադրբեջանի վրա իր ազդեցությունը գործադրեր, որպեսզի այնտեղ գերմանացի գաղութարարները նույն ընդունելությունը և վերաբերմունքն ստանային, ինչպես նախկին Ռուսաստանի մյուս մասերում: Ճանաչվում էր Պարսկաստանի տարածքային ամբողջականությունը և անկախությունը: Ըստ այդմ՝ Թուրքիան պարզավորվում էր Անգլիայի դեմ ձեռնարկվող ռազմական գործողությունների ավարտից հետո Պարսկաստանից էր քաշել իր գործերը, իսկ մինչ այդ նա պետք է որքան հնարավոր էր դյուրացներ Պարսկաստանի հետ Գերմանիայի երթևեկությունը¹⁸:

¹⁷ "Deutschland und Armenien...", էջ 435:

¹⁸ Համաձայնագիրն ամբողջությամբ տես "Die Armenische Frage...", էջ 586-588:

Արձանագրությունը ստորագրելիս Թալեաթը հարկ էր համարել նաև բանավոր կերպով հայտարարել, որ ինքը համոզված էր Թուրքիայի և կովկասյան կառավարությունների միջև լավ հարաբերությունների հաստատման անհրաժեշտության հարցում և հնարավոր ամեն բան անելու էր, որպեսզի թուրքական կառավարությունը նկատի առնել կովկասյան կառավարությունների փարաժքային պահանջները և նրանց հետ բարեկամաբար համաձայնության գար սահմանների հարցում: Սեպտեմբերի 25-ին Թուրքիա վերադառնալուց առաջ Թալեաթը նաև հավաստիացրել էր, որ Առսպանդուլուսում կովկասյան կառավարությունների ներկայացուցիչների հետ բանակցելու էր փարաժքային հարցերի շուրջ:

Պեպրարպուղարը, սեպտեմբերի 25-ին մի հեռագրով գեներալ Փոն Կրեսին փեղեկացնելով վերոնշյալի մասին, միաժամանակ հայտնում էր, որ գերմանական կողմը պետք է Առսպանդուլուսում կայանալիք այդ բանակցությունների համար Թալեաթին որոշ ժամանակ տար, և, եթե բանակցությունների արդյունքում համաձայնություն կայանար, ապա այնքան ռախարեսված համաժողովը կարելի էր համարել իրականացված¹⁹:

Չնայած Բրեստի պայմանագրով վճռված սահմանները ճանաչելու խնդիրը, գերմանա-թուրքական այդ արձանագրությունում հստակ կերպով չէր արտացոլվել, և ռախարեսվում էր այն դարձնել Առսպանդուլուսում կայանալիք բանակցությունների թեմա, այնուամենայնիվ Նայասպանից և Ադրբեջանից թուրքական զորքերի ետքաշման թուրքական կառավարության հանձնառությունը հայկական կողմի համար խիստ կարևոր ձեռքբերում էր: Այդ փաստը, ինչպես և այն, որ Թալեաթն ու Փոն Նինցեն Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրով ռախարեսված սահմանների ճանաչման վերաբերյալ բանավոր համաձայնության էին եկել, հույս էր ներշնչում, որ դա կամրագրվեր Առսպանդուլուսում փեղի ունենալիք բանակցություններում:

Այդ արձանագրությամբ վավերացվում էր նաև մի կարևոր իրողություն, որը կարող էր հովաստում առկա քաղաքական իրողությունը որոշակիորեն փոխել, այն է՝ Ռուսաստանի հետ Թուրքիայի և Գերմանիայի համագործակցային քաղաքականությունը: Դա էր, թերևս պարզապես, որ Նամ Օհանջանյանը, եթե նախկինում չէր բարձրաձայնում Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Ադուլֆ Յոֆեի հետ իր ունեցած առնչությունների մասին, հոկտեմբերի սկզբին Գերմանիայի պեպրարպուղար դր. Ջոլֆին փեղեկացրել էր, որ արդեն որոշ ժամանակ նրա հետ կապի մեջ էր և բավական հաճախ էր այցելում նրան՝ քրամադրելով նյութեր Նայկական հարցի և Նայասպանի Նանրապետության խնդիրների մասին: Ինչպես փեղեկացնում էր Ջոլֆը բանակային հրամանատարության ներկայացուցիչ բարոն Փոն Լեքսներին հղած իր՝ հոկտեմբերի 7-ի գրության մեջ, Յոֆեն, դրանք ընդունելով, խոստացել էր այդ մասին հաղորդել ռուսական կառավարությանը և նպաստել հայերի ցանկությունների իրագործմանը, մասնավորապես Ռուսաստանի կողմից Նայասպանի անկախության ճանաչմանը²⁰:

19 Տես այդ մասին պեպրարպուղարի՝ Փոն Կրեսին ուղարկված հաղորդագրությունը: Անդ, էջ 584-585:

20 Տես անդ, էջ 591-592: Այնուհանդերձ, Յոֆեն այդ առնչությամբ միայն փեղեկացնում էր, թե դեռ Մոսկվայից պարասխան չի ստացել: Անդ, էջ 592: Օհանջանյանն, ի դեպ, ինչպես նշում էր Ջոլֆը, նրան հայտնել էր իր համոզումն առ այն, որ «բոլշևիկները միայն այն ժամանակ հայերի համար ինչ-որ բան կանեն, եթե Գերմանիայից կամ Անգլիայի ու ԱՄՆ-ի կողմից նրանց վրա ճնշում գործադրվի: Բոլշևիկներին բանականությունը մարչելի չէ, և նրանք միայն ուժին են արձագանքում»: Անդ:

Թալեաթի եւ գերմանական ԱԳՆ բանակցությունները, ստորագրված արձանագրությունը, նաև Բրեստում գծված սահմանների ճանաչման՝ Թալեաթի կարարած հավաստիացումները, որոնց մասին ԱԳՆ-ն ակնհայտորեն րեղեկացրել էր Բեռլինում գրվող հայկական պարվիրակությանը, վերջինիս կողմից ընդունվեցին ոգևորությամբ: «Վերջերս Բեռլինում Թալեաթ փաշայի հետ վարված բանակցությունների արդյունքը մեզ թույլ է տալիս հուսալ, - նշվում էր Նամ Օհանջանյանի՝ հոկտեմբերի 1-ին գերմանական արագործնախարարությանն ուղղված նամակում, - որ թուրքական կառավարությունը, այն բանից հետո, երբ դադարեցրել է Բրեստի սահմանի ճանաչման դեմ իր դիմադրությունը, այժմ մեր փարածքի շուրափույթ ազատումով իր հանձնառությունը գործով կհաստատի: Մենք քաջաբերդյակ ենք այն ջանքերին, որոնք գործադրվել են գերմանական կառավարության կողմից այդ՝ մեզ համար ուրախալի արդյունքին հասնելու համար, եւ խնդրում ենք ընդունել մեր երախտագիտությունը: Մեր այսպեղի պարվիրակությունը մեր գոյության ամենաձայրահեղ վրանդի պահին ուղարկվեց Բեռլին՝ գերմանական կառավարության մոտ պաշտպանություն եւ օգնություն որոնելու համար: ... Տարածքների ազատման հարցի շուրափույթ լուծման միջոցով մեր՝ այսպեղի պարվիրակության առաջադրանքի ամենահրապառ մասը իրականացված կլինի»²¹:

Ինչպես նշում էր Նամ Օհանջանյանը, կային նաև այլ կարևոր հարցեր, որոնց լուծման համար հայկական կողմը դարձյալ Գերմանիայի աջակցության կարիքն ուներ: Խոսքը վերաբերում էր, մասնավորապես, Նայասպանի հանրապետության անկախության ճանաչմանը, առեւտրային եւ ֆինանսական համագործակցությանը եւ այլ հարցերի: Նա միաժամանակ հավաստում էր Գերմանիայի հետ բարեկամական փոխըմբռնմամբ բնութագրվող րեւական հարաբերությունների ձեւավորման՝ Նանրապետության կառավարության ցանկությունը, որի համար հայկական կողմն անհրաժեշտ էր համարում մի մշտական ներկայացուցիչ ունենալ Բեռլինում²²:

Հոկտեմբերի 2-ին գերմանական արագործնախարարությանն ուղարկված մեկ այլ նամակում Ն. Օհանջանյանը րեղեկացնում էր, որ իր կառավարությունն իրեն հանձնարարել էր դարձյալ մարնանշել մի գերմանական դիվանագիտական ներկայացուցչի՝ Երևան ուղարկելու հրապառ անհրաժեշտությունը եւ միաժամանակ գերմանական կառավարությանը խնդրել, որ նա իր ազդեցությունը գործադրեր Ավստրո-Նունգարիայի վրա՝ այնպեղից նույնպես մի ներկայացուցիչ ուղարկելու համար: Գերմանիայի ներկայացուցչի ուղարկումը հայկական կողմը անհերքաձգելի էր համարում, քանի որ հայ փախստականների վերադարձը իրենց հայրենի բնակավայրերը միայն նրա եռանդուն աջակցությամբ կարող էր հնարավոր դառնալ: Փախստականների թշվառ դրությունը, նշվում էր նամակում, օրեցօր ավելի էր ծանրանում, մինչդեռ նրանք առանց պաշտպանության երաշխիքի չէին համարձակվի վերադառնալ թուրքերի գրաված փարածքները: Նկարի առնելով այդ «փութը» իրավիճակը՝ հայկական կողմը թախանձագին խնդրում էր ժամ առաջ րեղեկացնել ներկայացուցչի անումը եւ գեներալ-մայոր Ֆոն Կրեսին հեռագրով հանձնարարել, որ նա հայկական կառավարության հետ համաձայնեցված կերպով, հայկական կողմի լիազոր անձանց հետ միասին

21 Անդ, էջ 588-589:

22 Տե՛ս անդ:

սպելծեր մի հանձնաժողով և հոգ քաներ փախստականների վերադարձի ու պաշտպանության մասին²³:

Ինչևէ, Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի ճանաչման՝ վերոնշյալ հույսերը միանգամայն հիմնավոր էին թվում, քանի որ թուրքական կառավարությունը հիշատակված երկկողմ արձանագրությունում պաշտոնապես վավերացրել էր գորքերի երբաշման իր հանձնառությունը և միաժամանակ, ի դեմս Թալեաթի, առաջին անգամ որոշակիորեն հանձն էր առել ճանաչել Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանները²⁴: Ուշագրավ է, որ հարցը Ռուսաստանի հետ ևս համաձայնեցնելու նպատակով կազմվեց նաև մի ռուս-թուրքական երկկողմ համաձայնագիր «Կովկասում ռազմական իրադրության կարգավորման վերաբերյալ», որը հոկտեմբերին պետք է ստորագրվեր Բեռլինում Օսմանյան կայսրության դեսպան Ռիֆաթ փաշայի և Խորհրդային Ռուսաստանի դեսպան Յոֆեի՝ իբրև իրենց կառավարությունների լիազոր ներկայացուցիչների միջև: Ստորև ներկայացնում ենք երեք կետերից բաղկացած այդ համաձայնագրի հիմնական բովանդակությունը, որն, ինչպես տեսնում ենք, միանգամայն համահունչ էր գերմանա-թուրքական համաձայնագրին: «1. Թուրքական կանոնավոր և անկանոն զորամասերը՝ ներառյալ հրահանգիչներն ու ծառայողները, անհապաղ եւ քաշվում Կովկասից՝ բացառությամբ Բրեստի խաղաղության պայմանագրի 3-րդ պարբերության 4-րդ հոդվածում հիշատակված շրջանների: Նրանք կարող են իրենց հետ քանել թուրքական ռազմական ամբողջ ունեցածքը: Զորամասերի երբաշումը և թուրքական ռազմական ունեցվածքի փոխադրումը պետք է իրագործվեն այս արձանագրության ստորագրումից հետո չորս շաբաթվա ընթացքում: 2. Վնասների հատուցման պահանջները, որոնք Ռուսաստանը Կովկասում թուրքական գործողությունների կապակցությամբ հանդես կբերի, պետք է ստուգվեն՝ համապատասխան մի խառը քննիչ հանձնաժողովի միջոցով կայացվելիք համաձայնության: 3. Թուրքական և ռուսական կառավարությունները գերմանական կառավարությանը խնդրելու են սրանման 1-ին և 2-րդ որոշումների իրագործման, ինչպես նաև Կասպից ծովից բրիտանական հարձակումների դեմ թուրքական զորքերի անվտանգության երաշխավորումը»²⁵:

Այն հանգամանքը, որ հայերի համար պարմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող այս համաձայնագրի ստորագրման օրը այդ փաստաթղթի՝ մեզ հայերի օրինակում նշված չէ, թույլ է տալիս կասկածել, թե այն առիտաբարակ հասցրել է ստորագրվել: Այնուհանդերձ նաև որպես վավերացման ենթակա համաձայնագրի նախագիծ՝ այն ապացուցում է, թե Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրի ճանաչման հարցը հոկտեմբերին որքան մոտ էր իր լուծմանը²⁶: Թուրքիայի այդ հանձնառությունն, ինքնին հասկանալի է, որ պարպադրված էր և ամենևին էլ թուրք կառավարողների հակահայկական դիրքորոշման

23 Տե՛ս անդ, էջ 589-590:

24 Նարկ է նաև նկատի առնել, որ Թուրքիան, որն արդեն գրավել էր Բաքուն, այլևս չէր կարող, ինչպես նախկինում, Բաքվի գրավումը խաղաքարք դարձնել իր գորքերի երբաշման և Բրեստի սահմանների ճանաչման հարցում իր ընդդիմությունը «հիմնավորելու» համար:

25 Անդ, էջ 595-596:

26 Կարելի է, անշուշտ, նաև ենթադրել, որ անխուսափելի պարություն առջև կանգնած Թուրքիան Բրեստի պայմանագրի ճանաչման հանձնառությամբ ձգպում էր իր բանակի գործողությունները ներկայացնել առկա իրավապայմանագրային լիազորությունների շրջանակներում, ինչը, սակայն, եթե նկատի առնենք պարության դեպքում թուրքական բանակի անվերապահ կապիտուլյացիայի հեռանկարը, իրապետական չի կարող համարվել:

փոփոխությունն չէր նշանակում: Դա պարզորոշ վկայում էին նաև սեպտեմբերին Բաքվում կատարված եղերական իրադարձությունները, որոնց մենք անդրադարձա՞նք առիթ ունեցել ենք²⁷:

Ինչ վերաբերում էր Բրեստի սահմանների ճանաչման՝ Թալեաթի հանձնառությանը, ապա պաշտոնական Գերմանիան դա համարում էր հայկական խնդրի առնչությամբ Թուրքիայի հետ բանակցություններում իր կարևորագույն ձեռքբերումը, ինչը որոշակիորեն համապատասխանում էր իրականությանը: Այդ առումով բնութագրական է գերմանական ԱԳՆ պերաբարպուղարի տեղակալ Լանգվերթի կողմից հոկտեմբերի 29-ին ժեներալ գրմով գերմանական ներկայացուցչությանն ուղարկված հետևյալ պարզաբանումը, որի բովանդակությունը ներկայացնում ենք ամբողջականորեն. «Արդեն հունիսի 4-ին Թուրքիան Բաթումում այն ժամանակ նոր սրբեղծված Հայկական Նահրապետության հետ խաղաղության պայմանագիր է կնքել, որի որոշումները հայերի համար փարածքային առումով շատ անուպատ էին, - նշում էր պերաբարպուղարի տեղակալը: - Թուրքական սահմանը Բրեստ-Լիվովսկի խաղաղության պայմանագրում գծված սահմանից շատ ավելի էր առաջ բերվել: Հայերին մնացող անբերրի լեռնային փարածքը անբավարար էր, տեղացի բնակիչներից զատ, Թուրքահայաստանից և թուրքերի կողմից գրավված կովկասյան փարածքներից հեռացած բազմաթիվ փախստականներին ապաստան և սնունդ տալու համար: Մենք Բաթումի պայմանագիրը չենք ճանաչել և անմիջապես եռանդուն քայլեր ենք ձեռնարկել՝ թուրքերին Բրեստի խաղաղության պայմանագրի որոշումների պահպանմանը դրդելու համար: Թուրքական կառավարությունը երկար ժամանակ խուլ էր ձեռնառում մեր բոլոր առարկությունների հանդեպ: Սկզբնական շրջանում հաջողություն չունեցավ նաև հայ փախստականներին գոնե բերքի հավաքման համար իրենց լքված բնակավայրերը վերադառնալու հնարավորություն տալու՝ մեր փորձը: Միայն սեպտեմբերին Մեծ վեզիրի հետ վարած բանակցություններում մեզ հաջողվեց նրան դրդել, որ ընդառաջի հայերի ցանկություններին, և ստանալ նրա խոսքումը Բաթումի պայմանագրի փարածքային որոշումների վերանայման վերաբերյալ: Նույնիսկ սկզբից Բեռլինում գրմով հայ պարվիրակները գերմանա-թուրքական բանակցություններին չեն մասնակցել: Թալեաթ փաշան, սակայն, նրանց հետ գրույցում համապատասխան կերպով տեղեկացրել է նրանց: Այնուհետև, Կոստանդնուպոլիս վերադառնալուց անմիջապես հետո նա մեզ տված իր խոսքումը կատարել է և Հայկական Նահրապետության հետ համաձայնագիր է կնքել հայկական փարածքը մինչև Բրեստ-Լիվովսկի պայմանագրով գծված սահմանը ազատելու և նրան տալու վերաբերյալ»²⁸:

Ինքնին հասկանալի է, որ պարերազմի այդ ավարտափուլում ժեներալ ուղարկված հիշյալ տեղեկությունն ուներ որոշակի քաղաքական նպատակադրում: Այն հանգամանքը, սակայն, որ Գերմանիան սկզբունքորեն դեմ է եղել Թուրքիայի կողմից Բրեստի պայմանագրով նախատեսված սահմանների խախտմանը, կասկածի տեղիք չի կարող տալ: Այլ խնդիր է, անշուշտ, թե նա ինչ չափով էր կարևորում այդ հարցի լուծումը և ինչ չափով օգտագործեց

27 Տե՛ս Ա. Հայրունի, Բաքվի 1918 թ. սեպտեմբերի հայկական ջարդերը գերմանա-թուրքական հարաբերությունների համալսարանում, «Էջմիածին», 2011, Բ, էջ 50-59:

28 "Deutschland und Armenien...", էջ 451-452: Այն մասին, թե պերաբարպուղարի տեղակալը որպեսզի է քաղել իր վերջին տեղեկությունը, ցավոք, որևէ տեղեկություն չի պահպանվել:

Թուրքիայի վրա իր ազդեցության լծակներն՝ այդ լուծումն իրականության դարձնելու համար: Բոլոր դեպքերում գինադադարին նախորդող շաբաթներին նման լծակների բանեցման, Թուրքիայի վրա ազդեցիկ ճնշման գործադրման ակնկալիքներն այլևս ժամանակավրեպ էին:

Արդեն սեպտեմբերի 29-ին գերմանական հրամանադրության գլխավոր շտաբում կայսր Վիլհելմ II-ի, պետքարտուղար Ֆոն Շինցելի, կանցլեր իշխան Ֆոն Ներպրինգի, բանակի գլխավոր հրամանադրար Պաուլ Ֆոն Շինդերնբուրգի և շտաբի պետ, բանակի «գլխավոր սպարաբեկ» Էրիխ Լուդևիգսդորֆի մասնակցությամբ արևելի ունեցած խորհրդակցությունում միանշանակաբար ընդունվել էր պատերազմում Գերմանիայի անխուսափելի պարտության վստայք, և նրանք ուղիներ էին փնտրում «ջրից չոր դուրս գալու» համար: Ըստ այդմ՝ նույն խորհրդակցությունում ընդունվեց որոշում նախկինում ընդդիմական կուսակցությունների միջոցով նոր պառլամենտական կառավարության ձևավորման մասին, որը և պետք է ստանձներ իսպրառակ պարտության պայմաններում գինադադարի կնքման ու հաշտության պայմանագրի ստորագրման ողջ պատասխանատվությունը²⁹: Նոյեմբերի 3-ին արքայազն Մաքս Ֆոն Բադենի գլխավորությամբ ձևավորված նոր կառավարությունը հենց նույն օրն ևս երբ հարկադրված եղավ դիմել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ նրա միջնորդությամբ գինադադար կնքելու խնդրանքով: Ինքնին հասկանալի է, որ այս իրավիճակում, որը Գերմանիայում նաև ներքին քաղաքական կյանքի փլուզման ասպակայունացման սկիզբ դարձավ, այնուհետև հայկական խնդրի առնչությամբ միջամտության ակնկալիքները, մեղմ առած, ավելի նվազ իրարեսեական էին, քան նախկինում:

Չնայած Բեռլինում գրավող հայկական պարվիրակությունը շարունակում էր հայության վերնաշրջա կենսական խնդիրների լուծման համար արքայազն Մաքսի գլխավորած նոր կառավարության աջակցությունը ձեռք բերելու հույսեր փայփայել, և այդ հարցում փորձում էր իր նպաստը բերել նաև գեներալ Ֆոն Կրեսը, այնուհանդերձ այդ հույսերը Թուրքիայի հետ կնքված գինադադարի պայմաններում այլևս ժամանակավրեպ էին: Նախկանշական է, որ չնայած կնքված գինադադարի համաձայն նոյեմբերին թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Ադրբեյդջանում իրենց գրաված քաղաքներից, բայց Ախալքալակի շրջանի փախստական դարձած հայության դրությունը շարունակում էր մնալ խիստ օրհասական, և դա այն պարզապես, որ այժմ նաև վրացական իշխանություններն էին նրանց արգելում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը: Դա էր վկայում Զամալյանի կողմից նոյեմբերին Գերմանիայի արագորոշնախարարության միջոցով Գերմանա-հայկական ընկերության փոխնախագահ Զեյմս Գրինֆիլդին ուղարկված հեռագիրը, որը վերջինս նոյեմբերի 27-ին առաքեց Նաոմ Օհանջանյանին. «Զամալյանը ... հեռագրում է, որ Ախալքալակի շրջանի ամբողջ բնակչությունը անօթևան և առանց որևէ սնունդի Բակուրիանի լեռներում մարմնաված է ոչնչացման, - գրում էր Գրինֆիլդը Օհանջանյանին: - Տեղական իշխանությունները նրանց արգելում են իրենց վայրը փոխել: Հայկական կառավարության բոլոր ջանքերը, որ փախստականներն իրավունք ստանան վերադառնալ թուրքերի կողմից գրավված իրենց հայրենի քաղաքները, մնում են անարդյունք: Հիվանդությունները, սովն ու սարսափելի ցուրտը օրական հարյուրավոր գոհեր են խլում: Եթե փախստականներին շար շուրջով

29 Stin „Informationen zur politischen Bildung“, Überarbeitete Neuauflage, München, 2003, էջ 3:

հայրենիք վերադառնալու հնարավորություն չգրվի, նրանք բոլորը կմեռնեն: Ջամալյանը խնդրում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը չարիքը կանխելու համար և ամենուր, որ-
պեզ Դուք հարկ կհամարեք, ռադիոհեռագրեր ուղարկել: Նա անհամբերությամբ սպասում է
պատասխանի: Ես Ջամալյանին հեռագրեցի, որ հեռագիրը փոխանցել եմ Ձեզ, և խնդրեցի
Հայաստանի քաղաքական իրադրության վերաբերյալ մանրամասներ հաղորդել ու ամե-
նապարզ կերպով առաքել խաղաղության վեհաժողովի մեր պարզօրոշականը»³⁰:

Այն, թե Ախալքալսկի առնչությամբ Վրաստանի հետ հարաբերություններն այնու-
հետև ինչպիսի գարգացում ունեցան, որոշակիորեն հայտնի է: Ինչ վերաբերում է Գերմա-
նիային, ապա Մաքսի գլխավորած կառավարությունը հոկտեմբերի վերջին և նոյեմբերի
սկզբին Անդրկովկասում այդուհետ որևէ դերակատարման հավակնություն չէր կարող ունենալ
և զբաղված էր իր երկրի ներքին ու արտաքին քաղաքական ճգնաժամի հաղթահարման
խնդիրներով: Նվաստացուցիչ պայմաններով գինադադարի կնքման և դրա հետ կապ-
ված՝ բազմաթիվ վրանգների ու ռիսկերի հետևանքով, սակայն, Մաքսի կառավարությա-
նը չխանգարեց Գերմանիայում ապաստանի թույլտվություն հարկացնել ռճրագործներ
Թալեհաթին և Էնվերին: Հոկտեմբերի 30-ի դրությամբ գերմանական արագործնախարա-
րությունն արդեն ապաստան փորձադրելու խնդրանք էր ստացել հիշյալ փաշաներից³¹, և
նույն օրն ևս էր արագործնախարար դր. Ջուֆը Կոստանդնուպոլսի գերմանական դեսպանին
հրահանգում էր դրական ընթացք քալ նրանց դիմումին: Քանի որ այդ փաստաթղթով որո-
շակիորեն պարզ է դառնում հարցի վերաբերյալ գերմանական կառավարության պաշտոնա-
կան դիրքորոշումը: Սրբոն և ներկայացնում ենք դրա հիմնական բովանդակությունը: «Թա-
լեհաթ փաշայի և Էնվեր փաշայի համար, որոնք մեզ հետ դաշինք կնքել են և հավաքաբին
կերպով մեր կողքին են եղել, մեր երկիրը բաց է,- նշում էր այնպեղ արագործնախարարը: -
Խնդրում եմ նրանց ամեն կերպ օգնել, եթե նրանք կարծում են, որ ստիպված են Թուրքիայից
փախչել քաղաքական հետապնդումների պատճառով: ...Մյուս նախկին իշխանավորների
դեպքում խնդիրն այլ է: Նրանց, ովքեր փախուստի միջոցով ուզում են խուսափել հայերի հա-
լածանքների պատասխանատվությունից, մեր կողմից ապաստան չի կարող փորձադրվել:
Մենք ամենաձանդ շրջանում մեր հնարավորության սահմաններում արել ենք ամեն բան՝
սարսափները կանխելու համար և չենք կարող հետին թվով մեզ մեղսակից դարձնել՝ ռճրա-
գործներին պաշտպանելով պարժից: Նմանապես և մենք հիմք չունենք հոգ փանելու նրանց
համար, ովքեր իրենց պաշտոնները չարաշահել են՝ ժողովրդին անխնա կողոպտելով, և հի-
մա պետք է իրենց վաստակած պարիժը կրեն»³²:

Նայ ժողովրդի այդ երկու դաժինների Գերմանիայում ապաստան փոխել կառավա-
րության կողմից մյուս հանցագործներին ապաստանի մերժումը, բնականաբար, չէր կարող

30 «Die Armenische Frage...», էջ 596:

31 Նավախար և ման դիմումներով են հանդես եկել նաև այլ երիտթուրք պարագլուխներ:

32 «Die Armenische Frage...», էջ 592-593: Ուշագրավ է, որ արդեն հոկտեմբերի 30-ի դրությամբ թուրքական
նոր կառավարության ղեկավար Ահմեդ Իզզեթ փաշան գերմանական դեսպանից պաշտոնական պարզաբանում
էր պահանջել Թալեհաթին և Էնվերին ապաստան փախուցնելու Գերմանիայի մարդկության առնչությամբ, և Ջուֆն իր
այս նույն հանձնարարականում այդ մասին դեսպանին հետեյալն էր հրահանգում. «Իզզեթ փաշայի ցանկացած
պարզաբանումը մենք չենք կարող քալ: Եթե նա նորից կվերադառնա իր հարցին, Դուք պետք է նրան ասեք,
որ մենք (հանցագործների - Ա. Ն.) հանձնման պարագայում առաջնորդվում ենք երկու երկրների միջև 1917 թ.
հունվարի 11-ին հաստատված՝ Հանձնման պայմանագրով: Անդ:

այն բարոյական շարժառիթով թելադրված լինել, որի պատրանքը միպոմ է սպեղծել այս հանձնարարականը: Այդ մերժման բուն պատճառը, ինչպես հաջորդիվ վկայում էր նաև նախարարը, Գերմանիային ուղղված՝ մեղսակցության մեղադրանքներից խուսափումն էր: Իսկ այն պնդումը, թե Գերմանիան հնարավոր ամեն բան արել է հայերի բնաջնջումը կանխելու կամ արգելելու համար, ծառայեցվում էր որպես այդ մեղադրանքներից ձերբագրման և Գերմանիայի արդարացման «եխմնավորում», բայց իրականությանն, իհարկե, չէր համապատասխանում: Պաշտոնական Գերմանիան պատերազմի ողջ ժամանակամիջոցում երբևէ չվորձեց իր թուրք դաշնակցի հետ ի նպաստ բնաջնջվող հայերի խոսել հարկադրանքի լեզվով, ինչը նա հաջողությամբ կարող էր անել: Եւ դա փաստարկվում է ոչ միայն խնդրո առարկա իրադարձությունների՝ համալիր դիպարկման միջոցով, այլև գերմանացի այն բարձրաստիճան դիվանագետների և գինվորականների վկայություններով, որոնք, բնաջնջվող ժողովրդի հանդեպ անարարբեր չլինելով, նաև իրարես էին և փորձում էին այդ իրարեսությունը ներշնչել իրենց կառավարությանը: